

Հետազոտական աշխատություն | Սեդմագիր

Լորենս Բրոյերս

Ռուսաստանի և Եվրասիայի ծրագիր | հունիս 2016 թ.

Լեռնային Ղարաբաղի հակամարտություն Շարժվելով դեպի պատերազմ

**CHATHAM
HOUSE**

The Royal Institute of
International Affairs

Սեղմագիր

- Լեոնային Ղարաբաղի հակամարտությունը, որում ներգրավված են Հայաստանն ու Ադրբեջանը, լրջորեն սպառնում է տարածաշրջանային և եվրոպական անվտանգությանը: 2016 թվականի ապրիլի սկզբին տեղի ունեցած ռազմական գործողությունների բռնկումից հետո միջազգային հանրության ջանքերը հրադադարի փխրուն ռեժիմի կայունացումից ուղղվել են դեպի պատերազմի կանխարգելումը:
- Սկսած վաղ 1990-ականներից՝ բանակցությունները շարունակում են փակուղում մնալ՝ առանց կողմերի դիրքորոշումներում որևէ արմատական փոփոխության: Արդյունքում՝ էլ ավելի զայրացած և վերազինված Ադրբեջանը շփման գծում ռազմական գործողությունները դիտարկում է որպես ազդեցության միակ լծակ դիմակայելու «սառեցված հակամարտության» անժամկետ ձգձգմանը:
- Ադրբեջանը 2016 թվականի ապրիլի 2-ից 5-ն ընկած ժամանակահատվածի իր գործողությունները ներկայացնում է որպես մարտավարական հաղթանակ և հոգեբանական բեկում: Թեև 1994 թվականից ի վեր առաջին անգամ տարածքային չնչին հատվածներ անցել են հակառակ կողմին, ռազմավարական նշանակության փոփոխություն գրեթե տեղի չի ունեցել: Ամենակարևոր փոփոխությունը Ադրբեջանի և Հայաստանի միջև մինչ վերջերս առերևույթ գոյություն ունեցող զսպման մեխանիզմի թուլացումն է:
- Հրադադարի ռեժիմի մշտադիտարկման Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) մանդատը, որը մշակվել է 1990-ական թվականների կեսերին, սահմանափակ է և հնացած: Սա հանգեցրել է անվտանգության ապահովման պատվիրակմանը առաջատար միջնորդներից մեկին՝ Ռուսաստանին, որն իր հերթին փորձել է ստեղծել լայնամասշտաբ պատերազմի կանխարգելման և զսպման մեխանիզմներ: Այնուամենայնիվ, չկան այնպիսի արդյունավետ մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ զսպել ցածր ինտենսիվությամբ կրկնվող բռնությունները՝ այդ թվում ապրիլին տեղի ունեցած լուրջ սրման նման գործողությունները:
- Հայաստանն ու Ադրբեջանն այժմ գտնվում են անվտանգության վտանգավոր վակուումի մեջ, որն անհրաժեշտ է լցնել միջազգային բազմակողմ գործողություններով: Այդ գործողությունների շրջանակը սահմանվում է նոր պատերազմի կանխարգելման վերաբերյալ առկա արտաքին կոնսենսուսով, ինչպես նաև հակամարտող կողմերի միջև առկա կոնսենսուսով՝ առ այն, որ նրանք չեն ցանկանում բացառիկ ռուսական վերահսկողություն անվտանգության ապահովման հանդեպ:
- Ինստիտուցիոնալ և ընթացակարգային իներցիան, աշխարհաքաղաքական մրցակցությունը հարևան թատերաբեմերում, կողմերի ցինիզմը և խոր անվստահությունը միմյանց նկատմամբ, ինչպես նաև սիմվոլիկ ազգայնականության շահեկանությունը չբարեփոխված քաղաքական վերնախավերի համար շարունակում են մնալ «ստատուս քվո»-ի բանակցային այլընտրանքի լուրջ խոչընդոտ: Այս գործոնները, համադրվելով ցածր ինտենսիվությամբ կրկնվող բռնությունների զսպման մեխանիզմների թուլացման հետ, լայնամասշտաբ պատերազմի սկսման լուրջ ռիսկ են ստեղծում:

Independent thinking since 1920

Չաթամ Հաուսը՝ Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտը, Լոնդոնում գործող անկախ հետազոտական ինստիտուտ է։ Մեր առաքելությունն է օգնել կառուցել կայուն անվտանգ, բարեկեցիկ եւ արդար աշխարհ։ Չաթամ Հաուսն անկախ կառույց է, որը խթանում է միջազգային խնդիրների հիմնարար ուսումնասիրությունը եւ չի արտահայտում ինստիտուցիոնալ տեսակետ որեւէ հարցի վերաբերյալ։ Այս հրապարակման մեջ արտահայտված տեսակետները հեղինակ(ներ)ինն են։

© The Royal Institute of International Affairs, 2016